

**ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
ՓԱԿՈՒՄԷՆ ՅԱՌԱԶԱՑՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԷՏԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄՕՏ**

\*\*\*\*\*

Այս անգամ ահագանգը կուգայ պաշտօնական Հայաստանին, որոշապէս Ստրազպուրկի մէջ ազգային փոքրասանուփոխներու լեզուներու պաշտպանութեան սահմանումին մասնակցած, Երեւանի Վ. Բրիտովի անուան լեզուաբանական համալսարանի տեսուչ՝ Սուրէն Զոլեանին:

Արդարեւ Բրիտովի անուան համալսարանի տեսուչը չափազանց վրդոված Մելգոնեան Կրթ. Հաստատութեան փակումէն, վտանգուած կը տեսնէ միջազգային կրթական-մշակութային շրջանակներու կամ պետութիւններու կողմէ հայերէնի զարգացման անոնց պարտաւորութիւնները: Տակաւին ան վտանգուած կը տեսնէ ապահովելու ազգային փոքրասանուփոխներուն իրաւունքը իրենց մայրենի լեզուով դիմելու պետական ու տեղական մարմիններուն, պաշտօնական շրջանակներուն եւ այլ հաստատութիւններուն:

Այժմ այլեւս ոչ զգացումն է որ կը խօսի, ոչ հայեցի պատրաստութեան անհրաժեշտութիւնը, ոչ անձնական քինախնդրութիւնը ինչպէս փորձեց բացատրել Երեւանի հերատեսիլէն Հ.Բ.Ը. Միութեան պարոն նախագահը, այլ ուղղակի պաշտօնական Հայաստանը, որ Մելգոնեանի փակումով տապարի հարուած մը տրուած կը տեսնէ միջազգային շրջանակներու մօտ հայերէնին: Հայերէնը աւանդական լեզուներու դասաւորումին մէջ առաջիններու կարգին ընդունուելու եւ Երոպական կարգավիճակ ունենալու կարելիութիւնը ունի: Այդ պարագային Երոպացիներու համար հայերէն սորվելու պայմաններ ստեղծելու պարտաւորութեան տակ կը գտնուին պետութիւնները:

Բայց Սուրէն Զոլեան կ'աղաղակէ, «եթէ մենք մտածում ենք Երոպայում հայերէնի նոր կարգավիճակի մասին ... պէտք է Երոպացիների համար հայերէն սորվելու պայմաններ ստեղծենք:»

«Այդ հարցում մենք բավականին հետ (ետ) ենք, դրա մասին է վկայում Մելգոնեան վարժարանի օրինակը: Մեր հասարակութիւնն անպայման պէտք է իմանա, թէ այս հարցի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք ունեն Կիպրոսի պետական ղեկավարներն ու հասարակության անդամները, որոնք ուշադիր հետեւում են բոլոր դատավարութիւններին, գիտեն ինչ է կատարվում ներկա պահին:»

Հայերէնը որպէս աւանդական լեզու, Հայաստանին զատ, յիշած են առայժմ Հունգարիան եւ Կիպրոսը: Հունգարիան հայերէնը յիշած է որպէս ազգային փոքրասանութեան լեզու, որուն զարգացման համար պետութիւնը ստիպուած է պարտաւորութիւններ ստանձնել:

Կիպրոսը հայերէնը նշած է որպէս աւանդական լեզու ստանձնելով անոր պաշտպանութիւնը: «Դրանով Կիպրոսն արտայայտել է իր յուրահատուկ վերաբերմունքը հայ համայնքի, հայ ժողովրդի եւ Հայաստանի հանդէպ: Ինչ (Սուրէն Զոլեան) որպէս Հայաստանի ներկայացուցիչ եւ Կիպրոսի ներկայացուցիչն հուզում էր այն հարցը, որ վտանգված են հայերէնի նկատմամբ Կիպրոսի միջազգային պարտաւորութիւնն ու կրթական քաղաքականութիւնը: Կիպրոսի իշխանութիւնների համար Մելգոնեան վարժարանը բավականին զգայուն թեմա է, նրանք շահագրգռուած են այդ հաստատութեան պահպանմամբ եւ նոյնիսկ ստադիո են ստեղծել հայագիտական կենտրոն: Կան գաղափարներ հայերէնը դարձնելու բարձրագոյն կրթության լեզու, Կիպրոսի համալսարաններուն բացելու հայագիտական ամբիոններ ...: Զրկվելով այդ վարժարանից (Մելգոնեան Կրթ. Հաստատությունից) ... հայ ... երեխաներն հնարաւորութիւն չեն ունենա մայրենիով միջնակարգ կրթություն ստանալու ... կսահմանափակուի համալսարանական ամբիոնների ստեղծումը .....»

Զոլեան կը շեշտէ.-

«Այս տարի Մելգոնեան վարժարանում ուսանողներին չգրանցելու փաստը խիստ մտահոգիչ է Կիպրոսի իշխանութիւններին, կրթօճախը դադարում է գոյություն ունենալուց եւ փաստորէն կտրվում է հայերէնի հետ ավանդական կապը: Կարծում եմ դա շատ լուրջ խնդիր է: ... Այնտեղ հայագիտական ուսումնասիրությունները խորացնելու փոխարէն փակելու որոշում կայացվեց:»

«Ի հարկէ կան համատեղ կանոնադրական եւ իրավաբանական խնդիրներ, սակայն դա ամենից առաջ բարոյական խնդիր է կապված հայերէնի: Մենք պարտավոր ենք զգոն լինել, նկատի ունենալով որ, հայերէնը որպէս ավանդական լեզու գրանցած Կիպրոսին, հետագային երբ միանան այլ պետություններ, անոնց համար շատ դժվար կլինի Կիպրոսի օրինակին հետեւելը:»

Ես բաական լայն մեջբերումներ քրի Վ. Բրիտանի անուան համալսարանի ռեկտորի մտահոգություններին, շեշտելու համար հայերէնի, հայ լեզուի ու հայ ժողովուրդին սպառնացող վտանգը, միջազգային մշակութային-կրթական շրջանակներու, պետութիւններու մօտ: Անոնք կրնան հայերէնը հետաքրքրութիւններէ հեռու, երրորդ կարգի լեզուներու շարքին դասատրել, որոնք նկատմամբ պետութիւններու որեւէ պարտաւորութիւններ չունին. մինչդեռ երբ հայերէնը դառնայ էթնիկ ասանդական լեզու, պետութիւնները լուրջ պարտաւորութիւն կը զգան ուսուցիչներու, դասագիրքերու պատրաստութեան, թարգմանութիւններու ապահովումին եւայլն: Այս բոլորը անշուշտ երբ CHART-ին մասնակցող պետութիւնները հետեւելով Տայաստանի, Տունգարիոյ եւ Կիպրոսի ներկայացուցիչներու օրինակին քուէարկեն ի նպաստ հայերէնի ասանդական էթնիկ լեզուի դասատրումին: Այս կրնայ պատահիլ միայն եթէ Մելգոնեան Կրթական Տաստատութիւնը շարունակէ գոյատեւել ըստ առաջնոյն որպէս կրթական հաստատութիւն, ինչպէս կը յայտարարեն Տայաստանի եւ Կիպրոսի էթնիկ լեզուներու CHART-ին մասնակցող ներկայացուցիչները:

Այսքան լուրջ, շեշտակի ու յստակ նախագրուչացումէն վերջ, կը զգա՞ն արդեօք ՏԲԸՄ-ի «Տիմնադրամի» անդամները այն անհար վտանգը որ կը սպառնայ հայ ժողովուրդին, միջազգային մշակութային մարզին մէջ: Կը զգա՞ն այն անհար բարոյական անկումը որուն պիտի ենթարկուի հայ ժողովուրդի մշակութային հարստութիւնը, գոր դարերու ընթացքին հայ միտքը արտադրած ու տուած է ժողովուրդներու հարուստ քաղաքակրթութեան:

Դժբախտաբար մինչեւ այսօր «Տիմնադրամի» անդամներուն ցուցաբերած վերաբերմունքը, ամէն կողմէ ու ամէն անկիւնէ բարձրացող աղէխարշ ձիչերուն ու պոռթկումներուն, մեզ կը սարսառացնեն համոզուելու որ անոնք ոչ մէկ ազգային պատմական զգացումներէ տարուած, կրնան վերատեսութեան ենթարկել իրենց առած ասագախորմի ենթարկող որոշումը: Ու այս զիս կը ստիպէ վերադառնալ հին օրերու ՏԲԸՄ-ի Կեդր. Վարչութեան անդամներու պատկերին եւ զանոնք բաղդատելու այսօրուան «Տիմնադրամի» հաւաքածոյ, հայ ազգային զգացումէ ու բարոյական հպարտութենէ զուրկ ներկայացուցիչներուն հետ:

Բայց արդեօք այս անհոգ երանելիները կը հասկնա՞ն Սուրէն Զուլեանի հնչեցուցած անագանգին իմաստը:

Տիմնադր. Կեդր. Վարչութեան անդամները, կը դողային իրաքանչիւր հայու բեկորին հայապահպանութեան, հայ աշակերտին հայկականութեամբ սնանելու պահանջքին վրայ: Անոնցմէ ամէն մէկը հայ ազգային կեանքի մէջ վաւերական, առողջ ու սրտցաւ ճանչցուած գործիչներ էին որոնք, ապրած հայ կեանքի տառապանքը՝ գիտէին գնահատել առնուած իրաքանչիւր որոշումին տարողութիւնը ժողովուրդին բարիքին ի խնդիր: Անոնք անընդհատ կը յայտարարէին. - «Ոչ մէկ հայ ուսանող հայ դպրոցէն պէտք չէ զրկուի նիւթական պատճառով:» Մինչդեռ այսօր երբ ամբողջ ազգը ոտքի ելած կ'ըմբոստանայ իրենց սխալ, ազգավնաս որոշումին դէմ, անարգանքով յետադարձ ակնարկ մը իսկ չեն նետել ժողովուրդային պոռթկումներուն դէմ եւ «մենք կ'որոշենք ու կարասնը թող քալէ», ըսելու անպատկար եսանդութիւնը ցոյց կուտան:

Սխալը յառաջ կուգայ սակայն ՏԲԸՄիութեան Ծրագիր-Կանոնագրին մէջ, չնախատեսուած սխալ ... ասանդական օրէնքներուն չհամապատասխանող, հիմնական փոփոխութեան մը գործադրութենէն:

ՏԲԸՄիութեան Ծրագիր-Կանոնագիրը չի նախատեսել Միութիւնը վերածել Տիմնադրամի: Այսօրուան դեկավարները 79րդ ընդհանուր ժողովին, գումարուած 10 Նոյեմբեր 1996ին Փաստտինա, Լոս Անճելըս, Ալեք Մանուկեան կեդրոնին մէջ յանկարծ հոն զանագան շրջաններէ հաւաքուած անդամներուն առջեւ նետեցին Կեդր. Վարչութեան ընտրութեան եղանակի փոփոխութիւնը:

Նախապէս Ծրագիր-Կանոնագիրը անդամներուն իրատունք կուտար ընտրել Կեդրոնական Վարչութեան անդամները: Այս ժողովին յանկարծ ժողովի անպատրաստ մթնոլորտին մէջ, Կեդր. Վարչութիւնը ներկաներուն առաջարկեց Կեդր. Վարչութեան անդամներուն ընտրութիւնը վերապահել Կեդր. Վարչութեան անդամներուն միայն: Ուրեմն Միութեան անդամները կը զրկուին իրենց ընտրական իրատունքէն ու Կեդր. Վարչութեան անդամներուն ընտրութիւնը կը վերապահուի Կեդր. Վարչութեան քանի մը անդամներու քմահաճոյքին:

Ծանօթ է թէ ընդհանուր ժողովին մասնակցող անդամները ժողովի օրակարգերու մտահոգութիւններէն աւելի ընդհանրապէս ժողովի կ'երթան բարեկամներու հանդիպելու, քանի մը լաւ օրեր անցնելու, այնպէս ինչպէս Մ.Նահանգներու մէջ կը յայտարարեն, convention-ի կ'երթան լաւ ժամանակ ունենալու համար:

Անշուշտ երբ յանկարծակի ներկաներուն կ'առաջարկուի Կեդր. Վարչութեան անդամներու ընտրութեան նոր եղանակ մը, ներկաներէն շատեր չեն իսկ անդրադառնար թէ ի՞նչ կ'առաջարկուի, իսկ ուրիշներ չեն իսկ հասկնար թէ ի՞նչ է առաջարկուածը:

Ու շուտով հաւաքէն դուրս գալու մտահոգութեամբ ժողովականները ձեռք կը բարձրացնեն ու կ'ամբողջանայ կատակերգութիւնը: Կորոշուի Կեդր. Վարչութեան անդամներու ընտրութիւնը ձգել Կեդր. Վարչութեան: Այսինքն Միութիւնը կը վերածուի «Տիմնադրամի», անդամներու ընտրութիւնը ձգելով քանի մը հոգիներու քմահաճոյքին: Այս պարագային, ընտրեալները պէտք է միշտ ձեռք վերցնեն ղեկավարին հետ, կամ այլապէս դուրս կը նետուին եւ նոր լուսկեացներ կուգան գրաւելու հեռացուածներու տեղերը:

Այլեւս ՏԲԸՄ-ը կորսնցուցած է իր ազգային դիմագիծը, անդամներու մօտ դադրած է հետաքրքրութիւնը ու այսօր ամէն տեղ ջլատիչ է կացութիւնը: Կրնամ ներկայացնել իւրաքանչիւր շրջանակի վիճակը որ միայն յուսահատական դարձած է եւ հաւանաբար կամաց կամաց շրջանակները ինքզինքնին լուծարքի պիտի ենթարկեն ու շուրջ հարիւր տարուան այս մեծ իրագործումներու ազգային կազմակերպութիւնը պիտի դադրի գոյութիւն ունենալէ:

Եթէ Կեդր. Վարչութիւնը Լոս Անձելըսի ժողովին Ծրագիր-Կանոնագրին մէջ այսպիսի հիմնական փոփոխութիւն մտցնելու նպատակ ունէր, նուազագոյն վեց ամիսներ առաջ Ծրագիր-Կանոնագրի փոփոխութեան առաջարկը պէտք է ներկայացնէր շրջանակներուն: Շրջանակները նախքան ընդհանուր ժողովի գալը, կ'ուսումնասիրէին փոփոխութեան առաջարկը եւ ընդհանուր ժողովին կուգային իրենց շրջանակին որոշումով: Այս է ընդհանուր եղանակը աշխարհի ամէն կողմ եւ ամէն կազմակերպութեան կամ ընկերութեան մօտ: Այս է աւանդական կանոնը ՏԲԸՄ-ի մօտ: Ինչու՞ ՏԲԸՄ-ի Կեդր. Վարչութիւնը չհետեւեցաւ այս միջազգային օրէնքին, ինչու՞ վախցաւ նախատեսելի հակազդեցութենէն եւ հապճեպ, անակնկալի բերելով անդամակցութիւնը, որոշում առնել տուաւ ապօրինի կերպով: Հաւանաբար անհրաժեշտ պիտի ըլլայ ուրիշ դատ մըն ալ բանալ Կեդր. Վարչութեան այս ընթացքին դէմ, ուղղելու համար այս ահաւոր ու վնասակար սխալը:

Դժբախտաբար ցաւալի է նաեւ որ, քանի մը բացառութեամբ ՏԲԸՄիութեան շրջանակները այս բոլոր հարցերուն շուրջ կը մնան լուռ, չեն յայտնէր իրենց տեսակետը, դժգոհութիւնը կամ համաձայնութիւնը, եթէ կան այդպիսիներ: Անոնք գլխացաւ չեն ուզեր ունենալ - մենք համագիտ տէք կ'ըսեն - ու կը մնան լուռ ջլատող իրենց շրջանակներով: Յաւալի է մանաւանդ այն շրջանակներու պարագան որոնց «գիտակից, խելացի» ճանչցուած ղեկավարները կը մնան լուռ, չեն տեսներ Միութեան հետզհետէ քայքայումը եւ այդ կերպ իրենք ալ մասնակից եղած կ'ըլլան Միութեան կործանման ընթացքին, երբ մանաւանդ նիւթական անկախութիւն ալ ունին: Երբ կարգը իրենց ալ գայ, շատ ուշ պիտի ըլլայ այն ատեն հակազդելու:

Որքա՞ն մեծ դժբախտութիւն է որ հայ դպրութիւնը իրենց նպատակակէտ ըրած մեր եկեղեցականութենէն, միայն Մուսթֆեան Պատրիարքը քաջութիւնը ունեցաւ հայ դպրոցին պաշտպանութիւնը ստանձնելու: Որքա՞ն ճշմարիտ ու անվայել էր տակաւին ընթացքը հայ մասնույի մէկ անդամին, որ անպատկար ոճով եւ ինքզինք ստորնացնող արտայայտութիւններով, անտեղի յարձակումներ գործեց Պոլսոյ Պատրիարքին վրայ: Ոչ մէկ ատեն եւ ոչ մէկը այդ մասնույի եղբայրակիցներէն նման ոճ գործածած էր մեր մասնույի պատմութեան ընթացքին հայ բարձրաստիճան եկեղեցականի մը դէմ: Եթէ անձնական հակադրութեամբ կամ ոմանց հաճելի ըլլալու համար ըսելիքներ ունէր ծանօթ յօդուածագիրը, կար քաղաքավար ու մեր մասնույին պատշաճ լեզուով խօսելու եղանակը:

Հոս պիտի ուզեմ նաեւ յիշել Զաւէն քահանայ Արգումանեանը որ միակ եկեղեցականը եղաւ հայ դպրոցին գոյատեւումը պաշտպանող:

Հարկ է նաեւ հաստատել որ հեռաւոր արեւմտեան աշխարհին մէջ եղաւ խմբագիր մը, որ յացորդական խմբագրականներով իր թաղի դպրոցին հայերէնի ուսուցման տրամաբանական գովերգութիւնը երգեց արդարօրէն, բայց բառ մը չկրցաւ գրել կամ գրուածները ընդունիլ իր թերթին մէջ Մելգոնեան Կրթական Հաստատութեան ղերին առնչութեամբ: Մինչեւ ո՞ր սայթաքած է հայ մասնույն ու հայ խմբագիրը կորսնցնելու համար իրենց անկախութիւնը քանի մը մասնույայի համար: Դժբախտ օրեր բոլորիս համար:

Կիմանանք տակաւին որ բարձրագոյն իշխանութիւններէ ճնշում կ'ըլլայ Մուսթֆեան Պատրիարքին վրայ յետս կոչելու Միութեան դէմ իր բացած դատը: Եթէ ճիշդ են այս տարածուած լուրերը, որքան ողբալի կացութեան վերածուած պէտք է ըլլան մեր իշխանաւորները, որոնք փոխանակ Միութեան հրահանգելու Մելգոնեան Կրթ. Հաստա-

տույթան գոյութան շարունակումը, կը ջանան փակել տալ զայն, հարուածելով հայ լեզուն մշակութային կեդրոններու մէջ, հայութեան բարոյական վարկին ահարկու հարուած մը տալով: Այսքան հոգիով ու մտքով աղքատացած է հայ ժողովուրդի ղեկավարութիւնը: Ինչո՞ւ ուրեմն պարզ, ռասիկ ժողովուրդը հայ զգացումներով կը տապալակի եւ ճիգ չի խնայել հայութեան ապագան յափտենականացնելու համար: Ասօր համա՞ր դարերու ընթացքին մեր ժողովուրդը տառապեցաւ, չարչարուեցաւ, ջարդուեցաւ, կողոպտուեցաւ, բայց տոկաց: Այսօր այս վարկաբեկիչ ընթացքով որքան անարդար պիտի ըլլանք անոնց նկատմամբ: Մեր ժողովուրդը միշտ ալ իր սրբութիւններուն, իր արդարամիտ իշխանատրներուն նկատմամբ եղած է զոհաբերող, հաւատարմ եւ նուիրաբերող: Մելգոնեանի քանի մը մասնունան չէ որ պիտի փրկէ հայը հայրենիքին մէջ: Ատոր համար մտահոգուելու պէտք չունին մեր իշխանատրները:

Բայց տակաւին մինչեւ այսօր մեր ժողովուրդին յայտնի չեղաւ թէ ի՞նչ պիտի ըլլան Միութեան -«Հիմնադրամի»- մարմինին ծրագիրները եթէ կարելիութիւն ըլլայ Մելգոնեան Կրթական Տաստատութիւնը վաճառել: «Հիմնադրամը» կը հաւատար որ Մելգոնեանի վաճառումէն կարելի պիտի ըլլար 80 – 100 միլիոն Ամ. տոլար: Ու խօսուեցաւ միշտ Տայաստանի մէջ Մելգոնեան ճամբարի մը մասին: Այդ ճամբարը պիտի արժէր առաւելագոյն մէկ կամ երկու միլիոն տոլար, քանի պետութիւնը հողը տրամադրած է: Տապա մնացած գումարը ինչի՞ պիտի ծառայէր: Ինչո՞ւ չեն արտայայտուիր «Հիմնադրամի» անդամները: Ո՞ր են Միութեան թափանցիկութեան մասին բարբառողները: Ինչո՞ւ մինչեւ հիմա «հիմնադիրները» կանոնաւոր մանրամասնութեամբ հաշուետուութիւն մը չներկայացուցին: Ինչո՞ւ մասնատրաբար չտուին Մելգոնեանի հաշուեկշիռները: Ի՞նչ կայ պահուած այդ հաշիւներուն մէջ:

Տակաւին դպրոցական եկամուտները բարդելով իրենց յատկացումներուն վրայ, կ'ուռեցնեն Միութեան մշակութային յատկացումները: Ժողովուրդին համար յայտնի չէ թէ ո՞ր դպրոցին որքա՞ն բացը կը գոցէ «Հիմնադրամը»: Միլիոններ կը յայտարարեն Միութեան մշակութային յատկացումը: Ինչո՞ւ չեն ճշդեր որքա՞ն է դպրոցներուն մուտքերը այդ ուռեցուած յատկացումներուն մէջ եւ որքա՞ն Միութեան ճիշդ յատկացումը իրաքանչիւր դպրոցին: Կրնա՞ն յայտարարել որ ամերիկացի մարդուկը որ Կիպրոս ղրկուած է եւ որ կը յայտարարէ թէ գործը դպրոց փակել է, մօտ երեք տարի է Կիպրոս է ու հիմա սկսած է դատարան կամ խորհրդարան քաշկռտուիլ, որքա՞ն արժած է ժողովուրդին, այսինքն մեզի, Միութեան անդամներու կամ մեր ժողովուրդին, որ առատօրէն նուիրաբերած է Միութեան: Տակաւին «Հիմնադիրներու» պարոն նախագահը կրնա՞յ բացատրել որ Մելգոնեանը փակելու համար որքա՞ն Միութեան դրամէն ծախսած ու բաժնած է: Ո՞ր են թափանցիկութիւնը այս բոլորին: Կերեւի Նախագահը եւ իր գործակիցները կորսնցուցած են թափանցիկ բառին իմաստը:

Ճի՞շդ է արդեօք որ պարոններ Էտուար Ժալսեան եւ Լեոն Բէպապճեան հրաժարած են «Հիմնադրամէն»: Եթէ ճիշդ է, անշուշտ կարգը պիտի գայ միաներուն որոնք այսքան ժողովուրդային արհամարհանքին չեն կրնար, պէտք չէ կարենան դիմանալ:

Դարձեալ կը կրկնենք, երբեք քինախնդրութիւն չկայ այս բոլոր գրուածներուն մէջ: Մեր նպատակը միայն ազգային շահերուն հետամուտ ըլլալն է: Մեր փափաքն է համոզել «Հիմնադրամը», հայ ժողովուրդի պարկեշտ ու կարող ներկայացուցիչներով վերակազմակերպել ու վերաբանալ Մելգոնեան Կրթական Տաստատութիւնը, վերաշահելով մեր ժողովուրդին վստահութիւնը ու յայտնաբերելով իրենց ազգային մտահոգութիւնը:

Ես անձնապէս որեւէ փափաք, փառասիրութիւն կամ ֆիզիքական կարելիութիւն չունիմ գործնական վերադաձի ի նպաստ Մելգոնեան Կրթական Տաստատութեան գոյատեւումին: Զիս դաժանօրէն կը մտահոգէ ՀԲԸՄ-ի այսօրուան կազմալուծուած ու կազմալուծուող վիճակը, ինչպէս եւ Մելգոնեանի գոյատեւումին անմիտելի կարեւորութիւնը: Իմ ցաւը անոր համար է որ, ես ու ինձի պէս բազմաթիւներ 60 տարիներ շարունակ աշխատած ըլլալով Միութեան զօրացման ու տարածման համար, երբ ան դարձած էր Սփիւռքի հայ ամենազօրաւոր ու ամենաօգտակար կազմակերպութիւնը ... այսօր կը տարանջատուի, չենք կրնար լռելեայն դիտել այս լուս մահացումը ու չփնտռել պատասխանատուները:

Կը յանձնարարուի ուշադրութեամբ կարդալ Վ.Բրիտովի անուան համալսարանի տեսուչ Սուրէն Զոլեանի հարցազրոյցը Մելգոնեան Կրթական Տաստատութեան առնչութեամբ, անդրադառնալու համար հայ մշակոյթի սպառնացող վտանգին: